ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.2/7946-2026

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-1241-19.01.2026-ՊԻ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխության վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

1. Նախագծի վերնագրում «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) կրճատ անվանման հիշատակումից առաջարկում ենք հանել երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը, այն է՝ «Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը և «օրենք» բառը: Օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը:»:

Նույն առաջարկությունը վերաբերելի է նաև Նախագծի 1-ին հոդվածում Օրենքի լրիվ անվանման մեջ նշված «Հայաստանի Հանրապետության» բառերին:

Նախագծի 1-ին հոդվածում «կրծքանշանով» բառից հետո անհրաժեշտ է հանել «:» կետադրական նշանը:

2. Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքի 45.3-րդ հոդվածում լրացվող նոր՝ 8-րդ մասով նախատեսվում է, որ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին հատուկ միջոցները հատկացնելու, պահելու, կրելու և հանձնելու կարգը սահմանվում է հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից: Հարկ ենք համարում նշել սակայն, որ ներկայումս հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին հատուկ միջոցներ հատկացնելու, պահելու, կրելու և հանձնելու կարգի վերաբերյալ համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը բացակայում է: Այս համատեքստում կարծում ենք, որ Նախագծի ընդունման դեպքում անհրաժեշտություն է

առաջանալու օրենքի կիրառումը ապահովելու նպատակով ընդունել համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում ենք Նախագծում նախատեսել անցումային դրույթ, որով կսահմանվի համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի» մասին օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի իրավակարգավորումն առ այն որ, եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը:

Հարգանքով՝ **ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**